ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼ - 2025-2026 ՈՒՍՏԱՐԻ
10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
Տևողությունը՝ 90 րոպե

1. Թվերի ո՞ր դասավորությունն է ճիշտ արտացոլում նշված հեղինակների ժամանակագրական հաջորդականությունը.

ա) Միքայել Նալբանդյան
բ) Գրիգոր Նարեկացի
գ) Նահապետ Քուչակ
դ) Խաչատուր Աբովյան
ե) Սայաթ-Նովա

1. բ, գ, ե, դ, ա
2. ե, բ, գ, ա, դ
3. բ, գ, ե, դ, ա
4. ա, դ, գ, ե, բ

2. Ո՞ր միտքը ո՞ր հեղինակինն է.

ա) Ո՛հ, փշոտ է ճանապարհդ…
բ) Ամեն մարդ չի կանա կարդա՝ իմ գիրն ուրիշ գրեն է։
գ) Քաջերի սերունդները քաջեր են։
դ) Չգիտակցված մահը մահ է…

1. Սայաթ-Նովա
2. Մովսես Խորենացի
3. Միքայել Նալբանդյան
4. Եղիշե

1. 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
2. 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
3. 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
4. 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ

3. Հովհաննես Թումանյանը ո՞ւմ մասին է ասել. *«…զգում է, որ …վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու անաչառ, վեհ ու վսեմ՝ որպես աշխարհքի ու մարդու մեծ բարեկամը»:*

1. Խաչատուր Աբովյան
2. Գրիգոր Նարեկացի
3. Նահապետ Քուչակ
4. Սայաթ-Նովա

4. Մխիթար Գոշի ո՞ր առակից է հետևյալ միտքը. *«Հզորները տկարներին արհամարհում են և չեն վախենում նրանցից, բայց փոքրերը ուժեղանում են իմաստությամբ և հաղթում հզորներին»:*

1. «Ձկները և նրանց թագավորը»
2. «Արջը և մրջյունը»
3. «Կոտրված ոտքով առյուծը»
4. «Աստղերը»

5. Ո՞ր ստեղծագործությունը ո՞ր ժանրին է պատկանում.

ա) «Առավոտ լուսո»
բ) «Աշխարհումս ախ չիմ քաշի»
գ) «Մեղեդի ծննդյան»
դ) «Երեկ ցորեկով բարով տանեին»

1. տաղ
2. խաղ
3. հայրեն
4. շարական

1. 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
2. 1-բ , 2-ա, 3-գ, 4-դ
3. 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
4. 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ

6. Ո՞ր միտքը չի վերաբերում Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբան»-ում ներկայացված հիմնահարցերին։

1. Ստեղծագործության նյութը պետք է լինի արդիական։
2. Գրաբարը արքայական լեզու է, բայց հասարակ ժողովրդին անհասկանալի, այդ իսկ պատճառով պետք է անցնել աշխարհաբարի։
3. Հոգևորը և աշխարհիկը պետք է ունենան բովանդակային միասնություն։
4. Հերոսը պետք է ընտրվի ժամանակակից կյանքից։

7. Ո՞ր պատմիչի ո՞ր հերոսի խոսքերն են. «Մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվե՞ս…»:

1. Մովսես Խորենացի, Հայկ Նահապետ
2. Եղիշե, Վարդան Մամիկոնյան
3. Փավստոս Բուզանդ, Վասակ Մամիկոնյան
4. Ղազար Փարպեցի, Վահան Մամիկոնյան

8. Պարույր Սևակը ո՞ւմ մասին է ասել. ***«...Նա նման է...հորիզոնի, որքան հեռանում ես իրենից, նույնքան մոտենում է ինքը, և ինչքան մոտենում ես իրեն, այնքան հեռանում է նա՝ մնալով միշտ անհաս և անմատույց, երբեք չփոքրացող և միշտ բացարձակվող»:***

1. Մովսես Խորենացի
2. Գրիգոր Նարեկացի
3. Սայաթ-Նովա
4. Նահապետ Քուչակ

9. Ձևակերպումներից ո՞րը չի համապատասխանում «Սասնա ծռեր» էպոսի բովանդակությանը:

1. Ջրի պաշտամունքը առանձնահատուկ տեղ ունի դյուցազներգության մեջ:
2. Դյուցազներգությունը լի է բազմաթիվ խորհրդանշաններով՝ Խաչ Պատերազմին, Քուռկիկ Ջալալին, Կեծակները:
3. Փոքր Միհրը Վանա քարից դուրս կգա, երբ որ աշխարհը ավերվի, մեկ էլ շինվի:
4. Դավիթը «էրթմնակոտոր» էր եղել, դրա համար էլ դաժանորեն պատժվում է՝ հատուցելով կյանքով:

10. Նահապետ Քուչակի հայրենի տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:

ա) Աչիցս արտասուք ուզեց, նա արյուն ի վար վաթեցավ,	1. ա, գ, դ, բ
բ) Հապա յիմ սրտես ի դուրս՝ հերկրե հերկիր թափեցավ,	2. գ, բ, դ, ա
գ) Երբ սերն ի յաշխարհս եկավ, եկավ իմ սիրտս բնակեցավ,	3. բ, ե, ա, գ
դ) Եկավ ի գլուխս ելավ, ի ըղեղս ելավ թառեցավ	4. գ, ե, բ, ա

11. Մեսրոպ Մաշտոցին վերաբերող այս դիտարկումներից որո՞ւմ սխալ կա:

1. Հայ ժողովրդին ձուլման վտանգից փրկելու համար Մեսրոպ Մաշտոցը կազմում է մի հրատապ ծրագիր՝ հայացնել եկեղեցական արարողությունները:
2. Հայ առաքելական եկեղեցին 2015 թվականին Մեսրոպ Մաշտոցին դասեց իր ազգային սրբերի շարքը:
3. 394-395 թվականներին Մեսրոպ Մաշտոցը ապրել է ճգնավորի կյանքով. մեծ գործից առաջ նա հոգեպես մաքրագործվել է:
4. Մեսրոպ Մաշտոցի շարականները հայ երգարվեստի առաջին դասական նմուշներից են:

12. Ո՞ր պատմիչը ո՞ր հերոսի հաղթանակի մասին է խոսում:

«... այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, պինդ քաշում է լայնալիճ աղեղը, երեքթևյան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, և սլաքը, շեշտակի թափ անցնելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում: Այս կերպով.....ընկնում է գետին և շունչը փչում: Իսկ ամբոխը, այս մեծ քաջությունը տեսնելով, փախչում է՝ ամեն մեկն իր երեսը դարձած կողմը»:

1. Եղիշեն՝ Վարդան Մամիկոնյանի:
2. Մովսես Խորենացին՝ Հայկ Նահապետի:
3. Փավստոս Բուզանդը՝ Վասակ Մամիկոնյանի:
4. Ագաթանգեղոսը՝ Տրդատ արքայի:

13. Ըստ քեզ՝ ո՞ր միտքը Սայաթ-Նովային չի բնութագրում:

1. Ոսկի բառեր, անգին քարեր, լալ ու գոհար շարել ես դու…
2. …մի հոյակապ սիրահար է՝ բռնված ու բռնկված սիրո հրդեհով…
3. Նա իր աշուղական երգերը գրել է միայն հայերեն:
4. Ազգային-հայրենասիրական թեմաներով երգեր չի գրել:

14.Ընտրի՛ր Միքայել Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծության տրված տողի շարունակությունը. ***«Ես՝ անբարբառ մի մանուկ, /Երկու ձեռքս պարզեցի…»:***

1. Խնդրում էի նորանից /Բազուկներս արձակել:
2. Եվ իմ անզոր թևերով /Ազատությունն գրկեցի:
3. Ազատությո՛ւն, դուրս թռավ /Իմ մանկական բերանից:
4. — Ազատությո՛ւն,— գոչեցի:

15.Նշի՛ր այն դիտարկումը, որը չի համապատասխանում իրականությանը։

1. «Սասնա ծռեր»–ը ժողովրդական բանավոր ստեղծագործություն է, այսինքն՝ բանահյուսական երկ։
2. Դարերի ընթացքում պատմվելով՝ այն մեզ է հասել մի պատումով։
3. «Սասնա ծռեր» դյուցազներգությունը Միավորված ազգերի կազմակերպության գիտության և մշակույթի հանձնաժողովի (ՅՈՒՆԵՍԿՕ) կողմից ճանաչվել համամարդկային մշակութային արժեք։
4. Դյուցազներգությունը պատմում էին ժողովրդական մարդիկ՝ ասացողները։

16.Հաջորդականությամբ նշի՛ր այն թվերը, որոնք Քուչակի ստեղծագործություններից են .

1. «Եկին ու խապար բերին…»
2. «Հյուծված եմ մեղքերից…»
3. «Երեկ ցորեկով բարով տանեին… »
4. «Միմյանց էր հյուսում ելևէջները…»
5. «Երբ սերն ի աշխարհս եկավ»
6. «Երկու փայլակնաձև արեգական նման»

17. Հաջորդականությամբ նշի՛ր այն տողերի համարները, որոնք Ֆրիկի ստեղծագործություններից են մեջբերված.

1. «Աղքատ իմաստուն լավ է…»
2. «Հիմիկ դժարեց բաներս…»
3. «Քու էշխն ինձի մաստ արավ…»
4. «Ցիս ռամիկ իմ…»
5. «Մեկն ի պապանց պարոնորդի…»
6. «Էլ ապրելու ումիկ չունիմ…»

18. Հաջորդականությամբ նշի՛ր Ներսես Շնորհալու ստեղծագործությունները մատնանշող թվերը.

1. «Հավատով խոստովանիմ», 2. «Տաղ Վարդավառի», 3. «Ողբ Եդեսիոյ»,
4. «Մեղեդի ծննդյան», 5. «Աշխարհումս ախ չիմ քաշի», 6.«Մատյան ողբերգության»։

19. Հաջորդականությամբ նշի՛ր Եղիշեի ասույթները մատնանշող թվերը.

1. Միաբանությունը բարի գործերի մայրն է, անմիաբանությունը՝ չար գործերի ծնողը։
2. Չկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության։
3. Լավ է աչքով կույր լինել, քան մտքով։
4. Ինչը մարդն ու նրա գործերն են, այն էլ նրա պատմությունն է։
5. Ամեն մի տուն և թագավորություն, որ բաժանվում է ինքն իր մեջ, հաստատուն մնալ չի կարող։

20. «Վահագնի ծնունդը» օրհներգում բաց է թողնված 5 բառ։ Գտի՛ր տրված 3 բառերի տեղը, այնուհետև հերթականությամբ նշի՛ր թվերը։

Երկնէր ……..., երկնէր ……..., **1. երկիր**
……. եւ ծովն ծիրանի. **2. երկն**
…….. ի ծովուն ունէր եւ …… եղեգնիկ։ **3. երկին**

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Հ. Հովհաննիսյան